ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«28» 06 2016
N 24-Հ
օր.N 2

«30» հունիս 2016
N
օր. N 682-Ա/2

Կ/Ա N. 12/1605
28.06.16թ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն-Գ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ կրթության և գիտության նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը վճարում է այդ Ծառայության դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2016թ. ապրիլի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

3) ՀՀ կրթության և գիտության նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

5) Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի կատարում Ծառայության դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) և 5) ենթակետերի:

4. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

4) Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն Գ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ կրթության և գիտության նախարարի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	Կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը տարեկան վարձը		325 000
4.			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

5) Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

6) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

7) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության առ 14.12.2011թ. N77-Ա և ՀՀ կրթության և գիտության նախարարության առ 09.12.2011թ.N1297-Ա/Ք համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ Գ.Կուտոյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01507079
հ/հ 900018301011

Կ.Տ.

ՀՀ կրթության և գիտության նախարար

_____ Լ.Մկրտչյան

ք.Երևան Կառավարական 2-րդ շենք
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 02512868
հ/հ 900011005015

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____ հեռախոս՝ 1- 99

12.09.16